վարդապետին[2]) և ռ. լիտր ահակի փողն Սկանդարի որդի Մահտեսի Ցարութիւն ետուր, մասնակից եղև թուին ՌՃԼԵ (1786)։

Սարգիս Արք-եպիսկոպոս Ջալալեանց[1]) ի ճանապարհորդութեան իւրում ի մեծն Հայս. «մասն բ. 1858 յերես 394—397. այսպէս ստորագրէ Սաղիանի վանքն».

«Անցի ի գիւղն Սաղիան, որ մերձ է ի քաղաքն Զամախւոյ, բնակիչք են Հայք, տունք յիսուն, ունին զայգիս բազումս և սերմանեն զտորոն. օդ և ջուր առողջարար և երկիրն արգաւանդ։ Աստ է հռչակաւոր մենաստանն յանուն սրբոյն Ստեփաննոսի նախավկայի, զոր կառոյց Կիրակոս վարդապետ ի թուին Հայոց ՌՃԶ. (1741) ի Հայրապետութեան տեառն Յակոբայ և ի կաթուղիկոսութեան Գանձասարայ տեառն Ղուկասու՝ համակ սրբատաշ քարամբք։ Վայելուչ գմբեթաւ, որոյ երկայնութիւնն տասն և վեց։ Դտանի աստանօր աջ սրբոյն Ստեփաննոսի նախավկային, և Մխիթարայ Գոշի, արծաթապատ և ոսկեզօծ։[2]) Մենաստանս այս առաջնորդարան է թեմին Զամախւոյ, ուրանօր նստէին թեմական Արքեպիսկոպոսունք։ Յոհան Արք-եպիսկոպոս առաջնորդ վիճակիս կառոյց գերկյարկեան լայնածոց առաջնորդարան բոլորովին ի կոփածու քարանց, նոյնպէս զիսոհանոց, զմառան, զգինետուն և զսենեակս միաբանից՝ բոլորն քար ու կիր։[3])

---

[2]) Այս արձանագրութեան ևս մի կտորը կայ միայն, քանի բառովս „...Հիւսիսային կողմն...գլխի սալինքն.. Ոսկան վարդապետ... Ասկանդարի որդի...“։

Ինչպէս պատմեցին Սաղիանցիք քահանայ և երեսփոխան. այս արձանաքարերն տաճարի շինութեան ժամանակ են կոտրատել և գործադրել հրամանաւ վերակացուին։ Շատ ափսոս և մեղք, լաւ չեն արել։

[1]) Նա եկել է Սաղիան 1851 թ. (15 տարի յետոյ Շահխաթունեանցէն) հրամանաւ Ներսէս Ե. Կաթուղիկոսին՝ վիճակային գործոց վերահասութիւն գործելոյ համար։ Կարդալ սորա ճանապարհորդութեան բ, հատորոյ ծանուցումն 1858 թիւ։

[2]) Աջն Եղիշէ առաքելոյն է ըստ աւանդութեան, և ոչ Գոշ Մխիթարայ։

[3]) Միայն առաջնորդարանի նեղքնայարկ երկու սենեակք երևին այժմ ի 1888 թ. և այն ճեղքեալ և քայքայեալ։